«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում.

Դաստիարակ՝ Արաքս Մխիթարյան

Մանկապարտեզ՝ ՀՀ «Լոռու մարզի Թումանյան համայնքի Քարինջ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ 5

1.1. Ամանոր..... 8

1.2. Սուրբ Ծնունդ 8

1.3. Տեառնընդառաջ 11

1.4. Բարեկենդան 12

1.5. Ծաղկազարդ 14

1.6. Սուրբ զատիկ 15

1.7. Համբարձման տոն 16

1.8. Պայծառակերպության տոն 17

2. ԳԼՈՒԽ 2. ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 19

2.1. Ծիսական խաղերի իրականացում 20

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 24

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքս կրում է «Ազգային տոների եւ ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում» վերնագիրը: Թեման ընտրելիս հաշվի եմ առել թեմայի արդիականությունը: Արդի հասարակության համար կարևորագույն խնդիրներից է բարոյական ազգային նորմերի ճիշտ արժևորումը և նոր սերունդների դաստիարակության գործում դրանց կիրառումը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ազգային տոներն ու ծեսերը, դրանց կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում:

Յուրաքանչյուր ոք, ով մուտք է գործում կրթական միջավայր, ունի առաքելություն՝ այն է կրթելու և դաստիարակելու հայրենիքին արժանի, բարոյական, ազգային և ավանդական արժեքները բարձր պահող անհատներ: Յուրաքանչյուր անձի, երեխայի մեջ պետք է սերմանել սեր հայրենիքի և ազգի նկատմամբ, իսկ ժամանակի ընթացքում այս սերը պետք է մեծացնել և ավելացնել:Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները, դրանց օգտակարությունը երեխաների արժեհամակարգի, ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում: Մեր երկրում երեխաների մեջ ազգային արժեքների ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում, և որպես բովանդակային բաղադրիչ, հաշվի առնելով երեխաների կարողունակությունները՝ պետք է ունենալ համապատասխան վերջնաարդյունքներ:

Ազգային արժեքները կարևոր նշանակություն ունեն եւ ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում: Նրանք կազմում են ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության և զարգացման երաշխիքը:

Անձի բազմակողմանի ձևավորման և զարգացման համար կարևոր է նրա արժեհամակարգում բարոյական, գեղագիտական, հոգևոր,մշակութային արժեքների ընկալումը:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ազգային, մշակութային,ընտանեկան,կրթական և այլն: Հաշվի առնելով այս բազմաթիվ հանգամանքները՝ մանկավարժության

համար խնդիր է դառնում երեխաների ազգային գիտակցության ձևավորունը սեփական ժողովրդի պատմության ու մշակութային հենքի վրա:

Մանկավարժի առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական եւ հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումը սերմանելն է:Նրա խնդիրն է պահպանել եւ փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից: Ազգային արժեք են իհարկե մեր ազգային տոներն ու ծեսերը:

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ

Կրթական համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարհճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց, շրջապատի նկատմամբ:Այստեղ է, որ նրա մեջ սերմանվելու են մարդուն այսօր այնքան անհրաժեշտ բարության առաջին հատիկները: Հայ երեխայի բարության ու առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեական տարրական գիտելիքների ուսուցումն է: Հայ երեխային անհրաժեշտ է հայեցի կրթություն ու դաստիարակություն և մենք՝ մանկավարժներս պարտավոր ենք ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար: Մշակույթը չէր պահպանվի, եթե գոյություն չունենային սերնդեսերունդ նրա փոխանցման միջոցները: Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը և ազգային տոները: Մենք հայերս մեր հիշողության, մեր պատմության տերն ենք ու ժառանգորդը՝ Հայկ Նահապետից մինչև հավերժություն:Մենք պետք է ուժ առնենք մեր ազգային արժեքներից՝ նրանցից վերցնենք լավագույնը, ազգային մտածողության շարժառիթներն ու ուղենիշները: Երեխաների աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի ձևավորման համար առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային տոները, ընտանեկան հանդիսությունները, տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները: Երեխաների գեղագիտական և քրիստոնեական դաստիարակության գործում անգնահատելի նշանակություն ունեն ընտանեկան, ժողովրդական, ազգային հանդիսությունների մանկականացված միջոցառումները: Դրանք հոգեհարազատ են երեխաներին, քանի որ այս դեպքում նրանք դառնում են մասնակից և կատարող: Ազգային արժեք են նաև ծեսերը: Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներ, որոնցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը: Ծեսն իրենից ներկայացնում է ավանդական կրոնական արարողություն, որին հավատացյալները վերագրում են մոգական հատկություններ: Ծեսը լայն տարածում ունի կրոնում, կենցաղում: Այն խորհրդանշական ձևերով վերարտադրում է

ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում է ազգի, ժողովրդի միասնականությունը: Հայոց եկեղեցում ծեսերը հաստատել, սահմանել և կարգավորել են կաթողիկոսները՝ համաձայն Աստվածաշնչյան մեկնությունների: Այս գործում մեծ ներդրում են ունեցել Գրիգոր Լուսավորիչ և Ներսես Մեծ կաթողիկոսները: Հայոց ազգային տոներն ու ծեսերը տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ են ունեցել: Սակայն այդ տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա: Հայկական մշակույթը հնուց ի վեր մինչ օրս էլ աչքի է ընկնում իր բազմաթիվ ու յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից: Ժողովրդի մեջ տոները նշելու ձգտումը շատ մեծ է, և տոնը ոչ թե հայտարարված տոնական օրն է, այլ՝ այդ օրվա բովանդակությանը և ժողովրդի մշակութային նորմերին համապատասխան տոնա ծիսական արարողակարգը: Հայ ազգային տոներն ունեն ծիսական արարողակարգ: Այդ տոներից են Նոր տարին, Սուրբ ծնունդը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Համբարձումը, Վարդավառը: Մարդիկ այնքան էին հավատում ծեսերի զորությանը, որ հնարել էին անձրևաբեր և անձրևախափան ծեսերը՝ որպեսզի կարողանային ծեսերի միջոցով կարգավորել բնության երևույթները:

Ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդե-սերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը ու ազգային առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել առօրյա կյանքի և կենցաղի վրա: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական: «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի

անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն կյանքի և գործունեության կարևոր պահերին: Ծեսերը անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս որպե՛ս ստեղծագործ, որպե՛ս գործիչ, որպե՛ս քննադատ Ա.Կ.Գեղամյան, [Ծեսը, ծիսակարգը և սովորությունը՝ որպես մշակույթի ժառանգման և փոխանցման մեխանիզմներ]: Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրող և ակտիվ փոխանցող: Ազգային ծեսերը այն միջավայրն է, որը մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող: Այն ծեսերը և տոները, որ հայ ժողովուրդը նշում էր դեռևս 100 տարի առաջ, շատ քիչ են պահպանվել մեր կենցաղում: Հայաստանի Հանրապետության առանձին մարզերում շարունակում են նշել Վարդավառը, որոշ տեղերում (մասնավորապես Գեղարքունիքի մարզ), մասամբ նշում են Համբարձումը, իսկ Զատկի, Տյառնընդառաջի, Սուրբ Խաչի որոշ ծեսեր պահպանվել են համարյա ամենուր: Ուսումնասիրողները հայ ժողովրդի տոնացույցում բացահայտում են նրա վաղնջական շերտերը, տեսնում արևի ու կրակի, ջրի ու հողի պաշտամունքին նվիրված հանդիսություններ: Իրենց ծագումով դրանց զգալի մասը գալիս են մեր ժողովրդի ձևավորման շրջանից և պատմության ընթացքում ձևափոխությունների ենթարկվելով մինչև այսօր հնարավորություն են տալիս վերլուծել և թափանցել մեր մշակույթի վաղնջական շերտերը:

https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D6%87_%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%BF%D5%B8%D5%B6%D5%A5%D6%80

1.1. Ամանոր

Հունվարի 1-ին տարին սկսելու և Նոր տարվա սկզբի տոն նշելու սովորույթը հայերի մեջ ընդհանրացել է ոչ վաղ անցյալում:

Տոնի անունները հայոց մեջ տարբեր էին՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ: Նոր տարվան նախորդող գիշերն էլ հայտնի էր Լոլեի գիշեր, Իզվլիկ, Գոտեկախ անուններով:

Նոր տարվա նախապատրաստությունները ուտելիքների շուրջն էին: Տոնի ժամանակ օգտագործվող ուտեստի տեսականին, դրանց ծիսական բնույթն ընդհանուր առմամբ նման էին շատ ազգագավառների համար: Նոր տարվա տոնական խնջույքն սկսվում էր դեկտեմբերի 31-ի ընթրիքով: Շատ տեղերում այդ օրն այցելություններ չէին լինում, սակայն այդ օրը ընտանիքի բոլոր անդամների ներկայությունը պարտադիր էր: Նոր տարվա սովորություններից կարելի է առանձնացնել նախորդ օրն ու գիշերը 10-12 տարեկան տղաների և աղջիկների խմբերի ծիսական շրջայցերը և տոնը շնորհավորելու ավանդույթը: Խմբերը պարելով շրջում էին փողոցներում և որևէ մեկի տանը մոտենալիս սկսում էին երգել: Երգերի տեքստերը պարունակում էին բարեմաղթություններ, ընտանիքի անդամների գովք: Մանկապարտեզում Ամանորյա տոնակատարությունը հատուկ տեղ է գրավում տոների շարքում: Այն երեխաների ամենասիրված տոներից մեկն է: Երեխաները մեծ ոգևորությամբ են պատրաստվում տոնին, բոլոր երգերը, պարերը սիրով են կատարում եւ մեծ ոգևորությամբ: Ամանորի նախաշեմին երեխաները պատրաստում են թեմատիկ զարդարանքներ, բացիկներ, որոնցով զարդարում ենք դահլիճը: Պատրաստում են բամբակյա ձնագնդիներ, որոնցով հաճույքով խաղում են միջոցառման շրջանակներում:

«Ամանոր»

Թեմատիկ պլան

1 շաբաթվա համար

Տեսակը՝ Տոն, տոնի պատրաստություն

Անհրաժեշտ նյութեր՝ գունավոր թուղթ, մկրատ, սոսինձ, գունավոր մատիտներ, ջրաներկ, գուաշ, պլաստիլին, եղևնու կոներ, վրձին, չոփիկներ:

Պատրաստման եղանակը՝ կտրատել, սոսնձել, գունավորել, ծեփակերտել, նկարել (չոթիկով, վրձնով, մատիտով):

Անհրաժեշտ աշխատանք՝ տոնին ընդառաջ նախապատրաստական աշխատանքներ:

Թեմայի նպատակը՝ Կարողանալ ճանաչել Ամանոր տոնը, ծանոթանալ նրա խորհրդանիշներին (զարդարված եղևնի, ձյան փաթիլ, Ձմեռ պապ, Ձյունանուշ)

- ✓ Զարգացնել գունազգացողությունը
- ✓ Գտնել տարբեր իրավիճակներում խնդիրների լուծման ուղիներ
- ✓ Գնահատել ընկերների աշխատանքը
- ✓ Լսել և մասնակցել խոսակցություններին

Վերջնարդյունք՝ կձևավորի բարեկիրթ վարք:

Կզարգանա կապակցված խոսք:

Կզարգանա երեխաների հիշողությունը, երևակայությունը, ստեղծագործական միտքը:

(խնդիրներ) կձևավորի զարդանախշեր կատարելու հմտություններ

կկարողանա ծեփել եղևնի, ձնեմարդ, ձաթիլ:

Կկարողանա վրձնով զարդանախշեր անել:

Կկազմեն երկրաչափական պատկերներով օրինաչափություններ:

Կկատարեն դիտարկումներ:

Վերջնարդյունք՝ կձևակերպի և կկիրառի իրավիճակային հարցեր սեփական փորձից,

Կհամեմատի առարկաները,

Կբացատրի յուրաքանչյուրի գործունեությունը,

Կհամեմատի և կխմբավորի առարկաները:

Կհորինի, կխաղա դիդակտիկ խաղ:

ԳՈՒՍ

Գիտենք, որ Ամանորին հյուր է գալիս Ձմեռ պապը:

Ուզում ենք իմանալ ինչու է Ձմեռ պապը հյուր գալիս միայն Ամանորին:

Սովորեցինք, որ Ամանորը ձմռան ամիսներին նշվող տոն է, և Ձմեռ պապը հյուր է գալիս միայն Ամանորի տոնին:

Նյութերի հավաքում.

1. Հարցազրույց տոնի վերաբերյալ
2. Դիդակտիկ պարագաների ձեռքբերում
3. Էքսկուրսիաների կազմում (դեպի հրաշքների աշխարհ)
4. Խաղ-վարժություն – «ձնագնդիկներ, փաթիլներ»

Օրվա երկրորդ կես.

1. Բեմադրություն («Անտառի բնակիչներ»)
2. Սպորտային խաղեր, շարժախաղեր (թզուկներ-հսկաներ)
3. Ձեռքի աշխատանք
4. Ամանորյա միջոցառման հրավիրատոմսի պատրաստում
5. Բացիկ և նամակ Ձմեռ պապին

Ա կենտրոն

1. Թատրոն
2. Արվեստ
3. Բնագիտական կենտրոն

Աշխատանքի ավարտին երեխաները ամբողջությամբ պատրաստ են Ամանորի միջոցառմանը:

Երեխաները կարողանում են՝ պատմել ստեղծագործական պատմություն, աշխատում են խմբերով, զիջում միմյանց:

SHOT ON REDMI 7
AI DUAL CAMERA

SHOT ON REDMI 7
AI DUAL CAMERA

SHOT ON REDMI 7
AI DUAL CAMERA

Տնօրենի դիտարկումներ

Թեման՝ Ամանոր

Ժամկետ՝ տասնօրյա

N	Ստուգման բովանդակությունը	Ստուգման կազմակերպման մեթոդիկան
1.	Կրթադաստիարակչական կրթական համալիր ծրագրին համապատասխան՝ • Ստուգել բառապաշարի հարստացման, կատարելագործման, խոսքի հնչյունային, քերականական կապակցված խոսելու, զրուցելու, վերապատմելու կարողությունը: • Ստուգել իրավիճակային հարցեր ձևավորելու և կիրառելու, առարկաները համեմատելու, խմբավորելու կարողությունը:	Ստուգումն անցկացվեց դիտարկման միջոցով:
		Հարց ու պատասխանի միջոցով պարզ դարձավ, որ երեխաները ձեռք են բերել բավականին գիտելիքներ, սովորել են Ամանոր տոնի նշանակությունը, խորհրդանիշները: Սովորել են բարեկրթության կանոնները և պահպանել դրանք:
2.	Ելնելով համալիր ծրագրի պահանջներից՝ ստուգել դաստիարակների կողմից ընտրված մեթոդների և հնարների ճիշտ ընտրությունը:	Դաստիարակն ուներ բավականին գիտելիքներ ընտրված թեմայի վերաբերյալ:
3.	Ստուգել աշխատանքի պլանավորման համակարգը:	Ըստ դաստիարակի աշխատանքի պլանավորման գրառումների:
4.	Ստուգել աշխատանքի կենտրոնների հագեցվածությունը և ուսուցման ընթացքում կիրառված դիդակտիկ նյութերը:	Դաստիարակն ուներ դիդակտիկ նյութեր, ապլիկացիաներ, նկարազարդ վատմաններ, Ամանորի խորհրդանիշներ, ձեռագործ վահանակներ:
5.	Դիտարկել ծնողների հետ տարվող աշխատանքները:	Զրույց ծնողների հետ:

Դաստիարակի կողմից իրականացվում էր հետևողական աշխատանքթեմատիկ պլանավորման առաջադրված պահանջները տվյալ տարիքային խմբում իրականացնելու ուղղությամբ: Երեխաները հեշտությամբ մտնում էին երկխոսությունների մեջ, օգտագործում բարեկիրթ բառեր և արտահայտություններ: Դաստիարակն իրականացնում էր իր առջև դրված վերջնարդյունքի նպատակը՝ ձևավորել և կիրառել իրավիճակային հարցեր սեփական փորձից, բացատրել յորաքանչյուրի գործունեությունը, համեմատել և խմբավորել առարկաները:

1.2. Ծնունդ և Աստվածահայտնություն.

Հայ առաքելական եկեղեցու հինգ Տաղավար տոներից, որը նվիրված է Աստվածորդու՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյանն ու Աստվածահայտնությանը (Մկրտությանը): Տիրոջ ծննդյան տոնակատարության առաջին հիշատակությունները սկսվում են 3-րդ դարից: Արևելքում մինչև 4-րդ դար Քրիստոսի ծննդյան տոնը կապվել է Աստվածահայտնության, այսինքն՝ Մկրտության տոնի հետ, որը նշվել է հունվարի 6-ին: Սակայն 336-ին Հռոմի եկեղեցին դեկտեմբերի 25-ը պաշտոնապես որոշել է Հիսուս Քրիստոսի ծննդյան օր: Այս միջոցով քրիստոնյաներն ամենայն հավանականությամբ նպատակ ունեին այդ օրը տոնվող Արևի չաստված Միթրայի մեծ ժողովրդականություն վայելող տոնակատարությանը հակադրել «Արդարության Արեգակի»՝ Քրիստոսի ծնունդը: Հետագայում՝ 4-րդ դարի վերջին, Ասորիքում, իսկ ապա՝ 5-րդ դարի կեսին, գրեթե ողջ Արևելքում (Ալեքսանդրիայում, Անտիոքում, Կոստանդնուպոլսում) Քրիստոսի ծննդյան տոնի օրը փոխադրվել է դեկտեմբերի 25-ին, իսկ հունվարի 6-ը մնացել որպես Տիրոջ Աստվածահայտնության օր: 451-ին Քաղկեդոնի ժողովը դեկտեմբերի 25-ը վերջնականապես հաստատել է Հիսուսի ծննդյան օր, թեև Երուսաղեմի եկեղեցին մինչև 549-ը շարունակել է նշել հունվարի 6-ին: Միայն Հայ եկեղեցին է, որ հաստատուն է մնացել հնագույն ավանդույթին և Քրիստոսի Ծննդյան ու Աստվածահայտնության տոնը շարունակում է նշել միասին՝ հունվարի 6-ին: Հայ եկեղեցում Սուրբ Ծնունդը և Աստվածահայտնությունը օրացուցային տարվա առաջին տոնն է:

Եկեղեցական տոնակատարությունն սկսվում է հունվարի 5-ի երեկոյան՝ Ճրագալույցի կամ Խթման սուրբ Պատարագով, որին նախորդում է յոթօրյա պահեցողության ու ապաշխարության շրջանը: Երեկոյան սուրբ Պատարագի ընթացքում հնչում է ավետիսը՝ «Քրիստոս ծնավ և հայտնեցավ»: Պատարագից հետո պահքը լուծվում է, և սկսվում ուտիքի ու տոնակատարության շրջանը, որը տևում է մինչև հունվարի 13-ը: Այս բոլոր օրերին քրիստոնյաները միմյանց ողջունում են «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» ավետիսով, որի պատասխանն է՝ «Զեզ եւ մեզ մեծ աւետիս»:

Գլխավոր տոնակատարությունը կատարվում է հունվարի 6-ին՝ սուրբ Պատարագի հանդիսավոր արարողությամբ ու Զրօրհնյաց մեծաշուք

հանդեսով: Զրօրհնեքը նվիրված է Տիրոջ մկրտությանը և այդպիսով՝ ջրի սրբագործման մեծագույն խորհրդին:

Հունվարի 7-ը, ինչպես և բոլոր Տաղավար տոներին հաջորդող օրերը, մեռելոց հիշատակության օր է, երբ հոգեհանգստյան սուրբ Պատարագից հետո հավատացյալներն այցելում են իրենց հարազատների շիրիմներին:

Հանդիսություններն ավարտվում են հունվարի 13-ին՝ Հիսուսի անվանակոչության տոնակատարությամբ, որը նվիրված է Տիրոջ յոթ օրական հասակում տաճար բերվելու, 8-րդ օրը թլփատվելու և Հիսուս անունը ստանալու հիշատակին:

Ծննդյան տոնի հոգևոր երգերը վերագրվում են պատմահայր Մովսես Խորենացուն (ըստ Ն. Թահմիզյանի, Մովսես Խորենացուն պատկանող Ծննդյան, Տյառնընդառաջի, Աստվածածնի Վերափոխման և այլ տոներին նվիրված երգերի ընդհանուր թիվը 120 է): Դրանցից առանձնապես ճանաչված է «Խորհուրդ մեծ»-ը: Զրօրհնեքին, ի թիվս այլ հոգևոր երգերի, կատարվում են երկու հանրածանոթ ստեղծագործություններ՝ Գրիգոր Գ Պահլավունու (12-րդ դար) «Ով զարմանալի» տաղը և Հովհաննես Երզնկացի Պլուզի (13-րդ դար) «Այսօր ձայնն հայրական» հորդորակը: Տոնի սրբասացությունը Ներսես Շնորհալու «Բազմութիւնք հրեշտակացն» է:

Ըստ Մատթեոս և Ղուկաս ավետարանիչների «Ծնունդը» քրիստոնեական արվեստում պատկերագրական հարուստ ավանդներ ունեցող, նաև հին կանոնից շեղվող, ձևի թարմության ձգտող թեմաներից է: «Ծննդյան» տեսարանի հին օրինակները պահպանվել են Պաղեստինի նկարազարդ սրվակներին, Կապադովկիայի ժայռափոր տաճարների որմերին, Հռոմի Սանկտա Սանկտորիում եկեղեցու մետաքսե գործվածքի վրա: Օձունի հայտնի կոթողի հարթաքանդակը և «Էջմիածնի Ավետարան»-ի «Մոգերի երկրպագությունը» մանրանկարը (6-րդ դար) «Ծննդյան» թեման ներկայացնող հայկական արվեստի վաղ շրջանի նմուշներից են: Քրիստոնեական կանոնի համաձայն՝ Բեթղեհեմի նշանավոր քարայրում մանուկ Հիսուսը շորերով փաթաթված կամ մերկ դրված է մսուրի մեջ, որի աջ մասում Տիրամայրն է, ձախում՝ եզ և ավանակ:

Վերևի հատվածում սովորաբար պատկերվում են հրեշտակները, ներքևի մասում՝ հովիվներն ու մոգերը: Պատկերի առաջնամասում՝ ամենաներքևի հատվածում, նկատելի է մտորող Հովսեփը: Այդ մասում երբեմն պատկերվում են Եվան ու Սողոմեն՝ ավազանի մեջ Հիսուսին լողացնելիս: Հայկական արվեստում թեմայի լավագույն իրագործումներից են Թորոս Ռոսլինի, Գրիգոր Ծաղկողի, Հովհաննես Սանդղկավանեցու համապատասխան մանրանկարները, Աղթամարի վանքի Սուրբ Խաչ եկեղեցու (921) որմնանկարը:

1.3. Տեառնընդառաջ

Հայ Առաքելական Եկեղեցին Տյառնընդառաջը տոնում է փետրվարի 14–ին, Քրիստոսի ծննդից՝ հունվարի 6-ից քառասուն օր հետո: Այն անշարժ տոն է: Երբ Մարիամն ու Հովսեփը քառասնօրյա Հիսուսին բերում են տաճար, ընդառաջ է գալիս Տիրոջ գալստյանն սպասող Սիմեոն ծերունին, գրկում մանկանը և գոհություն ու փառք տալիս Աստծուն, որ իրեն արժանի դարձրեց Փրկչին տեսնելու: Այստեղից էլ տոնի անունը« Տեառնընդառաջ՝ Տիրոջն ընդառաջ: Տոնական հանդիսությունները, սակայն ունեն հնագույն ավանդույթներ և առնչվում են կրակի մաքրագործող զորության հանդեպ ունեցած հավատի հետ: Հեթանոսական կրոնների մեջ մեծ տեղ էր գրավում կրակի պաշտամունքը: Կրակը խորհրդանիշն էր Արևի և Լույսի, ինչպես նաև՝ ջերմության: Կրակը համարվում էր նվիրական սրբություն: Ընտանեկան բույնը, երդիկը կոչվում է նաև օջախ, ծուխ: Սովորաբար Տյառնընդառաջի հրավառությունը վերագրվում է հայոց Տիր, ինչպես նաև Միհր աստծուն: Տիրը երազների մեկնիչն էր և պաշտպանը՝ դպրության ու արվեստի, իսկ Միհրը մարմնավորում էր կրակի ու լույսի ուժը: Տոնի գլխավոր նպատակն էր՝ կրակի միջոցով ազդել սառնամանիքների վրա և զորացնել արևի ջերմությունը: Արարողությունները եկեղեցում սկսվում են երեկոյան ժամերգությամբ, որից հետո արգելվում է «Լույս զվարթ» շարականը: Փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությունից հետո տեղի է ունենում նախատոնակ՝ բաժանում են մոմեր, և եկեղեցականը վառում է սեղանի վրա դրված մոմերը: Ժամերգությունից հետո հավատացյալները վառում են իրենց մոմերը և տանում տուն: Եկեղեցական արարողությունից հետո, հինավուրց սովորության համաձայն, եկեղեցու բակում կրակ է վառվում: Հին Ջուղայում փշե դեզը եկեղեցու գավթում պարտավոր էին պատրաստել նույն տարում պսակված երիտասարդները: Հանդիսակատարության ժամանակ նույն երիտասարդները, վառ մոմերը ձեռքում, շարքով կանգնում էին դեզի առաջ: Երբ քահանան, կարգը կատարելով, իր մոմով առաջինը վառում էր դեզը, նրանից հետո իսկույն վառում էին նորապսակները, և այլևս ոչ ոք: Երիտասարդները վառած մոմերով վերադառնում են տուն, վառում նախօրոք պատրաստված փոքրիկ դեզերը և թռնում վրայով: Դեզը վառելու միջոցին հրացաններով կրակում են, որոնց ձայնից շները վախենում են և մի կողմի վրա փախչում: Փախած կողմով էլ որոշում են այդ տարվա հողային առատությունը:

Շիրակում և Բասենում էլ դեզը վառելու իրավունքը տրված էր նորապսակներին: Վաղարշապատում և շրջակա գյուղերում նորահարս ունեցող տունը դըրընդեզի տոնին հրավիրում էր աղջիկներին և հարսներին: Քավորը բռնում էր նորապսակ տղայի ձեռքից, որն էլ բռնած էր լինում նորահարսի ձեռքից, և երեք անգամ պտտում դեզի շուրջ, ապա երեք անգամ թռնում էին խարույկի վրայից: Կրակի վրայից թռնելը նպատակ ուներ ազատվել չլավից (ոչ լավ, չար բան): Նույն նպատակով էլ վառում էին շորի մի մասը, փեշը: Հավաքվածներն ուշադիր հետևում էին ծխի ուղղությանը. այն ցույց էր տալիս այդ տարվա առավել բերքառատ գոտին: Անցյալում նորահարսերը ճյուղերի վրա տարբեր գույների կտորներ՝ լաթեր էին կապում, որևէ իղձ պահում մտքում և այդ ճյուղը գցում եկեղեցու բակում վառվող խարույկը: Քանի դեռ կրակը վառվում էր, կանայք մի սկուտեղի վրա լցրած փոխինդը, աղանձը, չամիչը, ընկույզը, կարմրացրած եգիպտացորենը, բոված սիսեռը, դդմի կորիզը և այլն բերում էին, պտտվում կրակի շուրջը, մի մասը բաժանում երեխաներին, մյուս մասը ներս տանում: Կրակի մոտ շատերը փոխինդ էին շաղախում մեղրով կամ դոշաբով: Տարեկան երկու անգամ՝ Տյառնընդառաջին և Ս. Սարգսին շաղախած փոխինդ ճաշակելն ուղղակի անհրաժեշտություն էր:Մեր մանկապարտեզում պարտադիր նշում ենք նաև Տեառնընդառաջի տոնը: Մանկապարտեզի բակում կրակ ենք վառում և շուրջը պտտվելով երգում ենք ծիսական երգեր: Դաստիարակների օգնությամբ երեխաները ցատկում են կրակի վրայով, տարբեր հատիկային կուլտուրաներից բաղկացած հատիկեղենը սփռում են շուրջը, իբրև առատության խորհրդանիշ:

1.4. Բարեկենդան

Մեր ազգային տոներից է Բարեկենդանը: Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Այն ուրախության ու զվարճանքի օր է, հիշեցնում է Ադամի և Եվայի դրախտային կյանքը, երբ նրանք ապրում էին վայելքի ու անհոգության մեջ: Նախկինում դրանք հեթանոսական տոնախմբությունների օրեր էին, կատարվում էին փետրվարին կամ մարտի սկզբին: Տոնը հավանաբար կապ ուներ գարնան սկսվելու հետ: Եվ պատահական չէին զվարճությունները, որոնք արթնացող բնությանը ուրախ դիմավորելու, մարդկանց վերակենդանացնելու խորհուրդ ունեին: Մարդիկ մաղթում էին միմյանց բարի կենդանություն: Հետագայում քրիստոնեությունը հարմարեցրեց

իրեն և դարձրեց Մեծ Պահքի նախորդող շաբաթվա տոն, որը նշվում էր կերուխումով, մասսայական խաղերով, մրցումներով, թատերախաղերով, պարերով և այլն: Այն տևում էր երկու շաբաթ, անմիջականորեն հաջորդելով Ս. Սարգսին և ավարտվելով Մեծ պասով: Մեծ պահքին նախորդող կիրակին Բուն Բարեկենդանի օրն էր: Պահքի կարևոր լինելը մարդկանց ցույց է տվել Քրիստոսը: Նա անապատում 40 օր է անցկացրել: Մարդիկ Հիսուս Քրիստոսի օրինակով են պահում Մեծ պահքը: Մեծ պահքի 40 օրերին գումարվել է նաև Զատիկին նախորդող 9 օրերը, և այն տևում է 49 օր: Մեծ պահքն ավարտվում է Զատիկի՝ Քրիստոսի Հարության տոնով: Բարեկենդանն այնքան սիրված, ժողովրդական, սպասված տոն էր, որ հայ ազգի կողմից այն ընկալվում էր որպես ամենաազգային, ինչպես նաև ամենաերջանկաբեր, խրախճանք, ճոխ ու առատ ուտելիքներ վայելելու տոն, պարերի, խաղերի, զվարճահանդեսների, թատերախաղերի, այցելությունների և ուրախության երկու շաբաթ: Այդ օրերին թույլատրվում էր առատ ուտելիք, կերուխում: Նախապատվությունը տրվում էր մսեղենի, կաթնեղենի, յուղի առատությանը: Տավարի, ոչխարի և թռչնեղենի մսից պատրաստում էին զանազան ճաշատեսակներ: Առաջին օրերին պատրաստում էին մեծ քանակությամբ գաթա ու հալվա: Երեկոյան ուտում էին կաթնապուր, մածուն, խաշած ձու: Պատրաստում էին փաթիլա, բխբխիկ: Որոշ տեղերում նախապատվությունը տրվում էր փորը ձավարով ու զանազան համեմունքներով լցոնած և թոնիրում ամբողջովին խորոված ոչխարին կամ տվյալ վայրում առավել սիրված կերակրատեսակներին: Պարտադիր ճաշատեսակը խաշիլն էր, որով սկսվում էր տոնը և երկու շաբաթ պատրաստվում բոլոր տներում: Տանտիկիններն իրենց պահած մթերքներով շռայլորեն հյուրասիրում էին ընտանիքի անդամներին և հյուրերին: Վերջին օրը, երեկոյան, կաթնապուր ու մածում էին ուտում, վրայից՝ խաշած ձու, ասելով. «բերաններս փակում ենք սպիտակ ձվով: Աստված արժանացնի կարմիր ձվով բաց անելու»,- ակնարկելով, որ ահա սկսվում է Մեծ պասը, որի 49 օրերի ընթացքում այլևս ձու չպիտի ուտեն մինչև Զատիկ: Հարսանիքներն ու նշանդրեքները Բարեկենդանի անբաժան ուղեկիցներն էին: Դրանք, իրենց հերթին, նոր թափ էին հաղորդում տոնի ուրախությանը: Ուրախ պարերը Բարեկենդանի խնջույքների անբաժան ուղեկիցներն էին: Պարերը սկսվում էին առաջին օրը և օրեցօր աշխուժանում, բազմամարդ դառնում ինչպես

կատարողներով, այնպես էլ հանդիսատեսներով, խրախուսողներով: Հատկապես վերջին շաբաթ – կիրակի օրերը դրանք դառնում էին համընդհանուր, համազգուղական, համաթաղական: Պարում էին ինչպես զուռնա - դհոլի նվագի տակ, այնպես էլ պարերգերի:

1.5. Ծաղկազարդ

Հնագույն շրջանում հայ ժողովուրդն ունեցել է խնկենու, սոսու, կաղնու, չինարենու, ուռենու պաշտամունք՝ որպես տիեզերքի ներդաշնակության, անմահության, պտղաբերության, կենաց ծառի խորհրդանիշ: Մեր նախնիները Ատիս աստվածուհու տոնին նվիրված օրը, առավոտյան վաղ, արևից առաջ գնում էին սրբազան անտառ և ծիսակատարությամբ ծառից պոկում մի ճյուղ: Ծառը զարդարում էին շորի պատառիկներով, պտուղներով: Եղել է տոն, որը ժողովուրդն անվանել է Ծառզարդար: Զատիկից մեկ շաբաթ առաջ Հիսուսը, ավանակի վրա նստած, իր աշակերտների հետ մտավ Երուսաղեմ: Ժողովուրդը նրան ցնծությամբ դիմավորեց. մարդիկ իրենց զգեստներն ու արմավենու ճյուղեր էին փռում Հիսուսի ոտքերի տակ և գոչում.

Օրհնությու՛ն Դավթի Որդուն, օրհնյա՛լ է Նա, ով գալիս է Տիրոջ անունով: Ծաղկազարդը (Ծառզարդար) Մեծ Պասի նախավերջին կիրակնօրյա տոնն է: Այդ օրը եկեղեցիներում Ս. Պատարագ է մատուցվում, մարդիկ ուռենու բողբոջած ճյուղերն օրհնել են տալիս հոգևորականներին և տանում իրենց տուն: Ինչպես Պաղեստինում ձիթենիներն ու արմավենիները, այդպես էլ Հայաստանում տարվա այդ ժամանակ բողբոջում են ուռենիները, բարդիները: Ուռենու ճյուղերը խորհրդանշում են այն արմավենու ճյուղերը, որոնք հրեաները փռում էին Հիսուսի ոտքերի տակ, երբ նա մտնում էր Երուսաղեմ: Նորապսակ երիտասարդները, նշանված տղաները շաբաթ լույս կիրակի կեսգիշերին, արմատախիլ էին անում նոր բողբոջած ուռենիները, ճյուղերը զարդարում գույնզգույն լաթի կտորներով, թելի վրա շարված չամչահատիկներով, մրգերով, եռասայր մոմերով: Նրանք եկեղեցի էին շտապում: Առաջինը տեղ հասնողը խփում էր զանգը, մյուսները գնում էին քահանային արթնացնելու: Ողջ եկեղեցին զարդարում էին ուռենու բողբոջած ճյուղերով, մի մեծ կույտ ճյուղեր էլ դարսում էին կենտրոնում:

Եկեղեցու մուտքը ամբողջովին« հավաքում էին ծաղկե շրջանակով: Նշանված տղաները զարդարված ծառերով կանգնում էին իրենց հարսնացուների առաջ: Մերձավոր կանանցից մեկը ծառի վրա եռասայր մոմ էր վառում ու ընծաներ տալիս:
https://rimarstakyan.wordpress.com/2020/02/15/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D5%A5%D5%BD%D5%A5%D6%80%D5%A8/

1.6. Սուրբ Զատիկ

Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունը եկեղեցու գլխավոր տոներից է: Աստծո Որդին իր արյունը հեղեց աշխարհի և մեղավոր մարդկանց փրկության համար, խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ: Հայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենամեծ ու ամենասպասված տոնն է: Այն շարժվում է 35 օրերի միջև՝ մարտի 22 -ից մինչև ապրիլի 25 -ը: Զատիկ բառին տրվում են տարբեր ստուգաբանություններ: Տոնի առաջին և ամենամեծ խորհուրդը բնության զարթոնքի, տարվա եղանակների զատվելու, որոշվելու, բաժանվելու գաղափարն է: Զատվել բառն այստեղ խորհրդանշում է ոչ միայն տարվա եղանակների զատումը, այլ նաև բնության գույների զատումը, բաժանումն ու տարբերակումը համընդհանուր գորշությունից, միապաղաղությունից: Հարություն առած բնությունը զարդարվում է կանաչով, ծառ ու ծաղկով, հողը ծածկվում է գույներով, ծաղկում են ծիրանենիները, խնձորենիները, տանձենիները, դեղձենիները... Հարության տոնի հետ միաժամանակ վերադառնում են չվող թռչունները՝ արագիլը, ծիծեռնակն ու սարյակը: Զատիկ բառի մյուս մեկնաբանությունը ազատվել իմաստն ունի: Բացի վերոհիշյալ խորհրդից, այսինքն՝ ձմռան երկար թագավորությունից բնության ազատվելուց, հավանաբար այն նշանակել է նաև Մեծ Պասը ավարտելու, դրա խստություններից ազատվելու իմաստը, երբ մարդիկ քառասնօրյա պասով մաքրագործելով հոգին ու մարմինը, վերջապես իրավունք են ստանում օգտվելու երկար սպասված, կենդանական ծագում ունեցող կերակուրներից: Այդ է պատճառը, որ գրպաններում մի-մի ձու դրած, նրանք գնում էին ժամերգության և ավարտվելուց անմիջապես հետո, ուտում ձուն: Զատկական ձուն« օրինակն է բոլոր աշխարհի, և ինչպես որ իմաստուններն ասում են՝ դրսի կեղևն նմանում է երկնքին, մզղաձևը՝ օդին և սպիտակուցը՝ ջրին, դեղինն էլ

երկիրն է, այսինքն՝ մեջը (Թորգոմ վարդապետ): Գրիգոր Տաթևացին էլ նման միտք է արտահայտել ձուն կարմիր ներկելու մասին.

Միայն Զատիկին ենք ձուն կարմիր ներկում, որովհետև ձուն օրինակ է աշխարհի, և ինչպես իմաստուններն են ասում՝ դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է, որ աշխարհը գնվեց Քրիստոսի արյամբ: Եվ մենք, կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով, հռչակում ենք մեր փրկությունը: Ուշագրավ է, որ ձուն համարվում է կենաց ծառի, կյանքի խորհրդանիշ: Զատիկի առավոտյան մատուցվում է Ս. Պատարագից, որի ավարտից հետո տնետուն անցնելով՝ մարդիկ իրար հայտնում են Ս. Հարության ուրախաբեր ավետիսը՝ ասելով.

Քրիստոս հարյավ ի մեռելոց: Օրհնյալ է հարությունը Քրիստոսի:

Մեծ ոգեւորությամբ և խանդավառությամբ ենք մանկապարտեզում նշում Սուրբ Զատկի տոնը: Տոնի նախաշեմին երեխաները պատրաստում են զանազան զարդարանքներ: Նախապատրաստում ենք դատարկ ձվի պատյաններ, որոնք իրենց ձեռքով գեղեցիկ գույներով նկարազարդում են: Այդ գեղեցիկ գունագեղ ձվերով հետո զարդարում ենք դահլիճում դրված ուռենու ճյուղերը: Նախօրոք դաստիարակի օգնությամբ բամբակի վրա ցանում են ցորեն, գարի, որը զատիկի խորհրդանիշներից է: Զատկի օրը դահլիճը համապատասխան ձևավորվում է: Սեղաններին դնում ենք Սուրբ Զատկի տոնին նվիրված ուտելիքներ՝ ներկված ձվեր, չամչով փլավ և այլն:

1.7. Համբարձման տոն

Հարություն առնելուց հետո Հիսուսը 40 օր երևաց աշակերտներին, խոսեց Աստծո արքայության մասին: Քառասուներորդ օրը նրանց հետ Ձիթենյաց լեռը բարձրացավ, վերջին պատգամները տվեց սիրելի աշակերտներին, ապա ձեռքերը դեպի երկինք տարածեց, օրհնեց նրանց և լեռան գագաթից սկսեց համբառնալ երկինք: Շուտով մի լուսավոր ամպ իջավ և ծածկեց նրան առաքյալների տեսողությունից: Համբարձման տոնը կատարվում է Հարության կիրակիից՝ Զատիկից քառասուն օր անց և, պայմանավորված լինելով Զատիկով, բնականաբար, այն շարժական է և ամեն տարի տարբեր օրեր է նշվում: Սակայն այն միշտ տոնվում է հինգշաբթի: Առնելով մարդկային մեր բնությունը՝ Քրիստոսն իր գալուստով

մաքրեց ու օրհնեց մարդկանց: Մկրտվելով ջրում և թաղվելով գերեզմանում՝ մաքրեց հողն ու ջուրը, իսկ հարությունից հետո՝ օդն ու կրակը: Նա մարդկային բնությունը միավորեց Աստծո Խոսքին: Եթե Զատկի տոնին առանձնանանում, զատվում են բնության գույները, ավարտվում ցանքի աշխատանքները, ապա Համբարձմանն ակնկալվում է ցանված բերքի աճն ու փթթումը: Այդ նպատակով ժողովուրդը դուրս է գալիս դաշտերը և երգ-պարով, ուրախություններով սիրաշահում Մայր բնությանը: Համբարձումը բնության բեղունության ու արբունքի, բուսականության աճի տոն է: Այն համընկնում է գարնանային աշխատանքների ավարտի հետ, այսինքն՝ այն պահի, երբ երկրագործն, իրենից կախված ամեն ինչ անելուց հետո, հայացքը վեր է պարզում և Աստծուց ու բնությունից ակնկալում հատուցում: Տոնի մյուս կարևոր խորհուրդը. այդ օրն արգելվում է արյուն հեղել՝ կենդանու զոհ մատուցել:

1.8. Պայծառակերպության տոն

Զատիկին հաջորդող 14-րդ կիրակի օրը մեր Եկեղեցին տոնում է Պայծառակերպության տոնը, որը ժողովրդի մեջ հայտնի է Վարդավառ անվամբ: Այդ օրը Հիսուսը Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի հետ բարձրացավ Թաբոր լեռը՝ աղոթելու: Աղոթքի պահին Աստվածորդու դեմքը փայլեց՝ ինչպես արեգակ, զգեստները շողարձակեցին՝ ինչպես լույսը: Հանկարծ առաքյալներին երևացին Մովսես և Եղիա մարգարեները, ովքեր խոսում էին Հիսուսի հետ: Մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ, և ամպից լսվեց մի ձայն, որ ասում էր. Դա է իմ սիրելի Որդին, դրան լսեք: Եկեղեցական մեկնաբանությամբ Քրիստոսն է նմանեցվում վարդի, ու եթե մինչ ի յայլակերպություն որպէս թէ վարդ ի կոկոնի էր, եւ յայլակերպիլն՝ ի թաբօր՝ իբր թէ վարդ վառեցաւ» (Տ. Թորգոմ պատրիարք): Ավանդությունը պայծառակերպության վայր է համարում Թաբոր լեռը, որի վրա էլ հետագայում կառուցվել է եկեղեցի՝ ի հիշատակ Տիրոջ պայծառակերպության: Վարդավառ բառը տարբեր իմաստներով է ստուգաբանվում, որոնք բոլորն էլ բնութագրում են տոնը, ինչպես նաև՝ մատնանշում դրա խորհուրդները: Մի տարբերակով« վարդավառ բառը կազմված է վարդ(ուարդ) – ջուր և վառ – սրսկել, լվանալ արմատներից, նշանակում է ջրցանություն, որը կազմում է տոնական

արարողակարգի գլխավոր մասը: Եվ իրոք, հուլիսին, երբ արևը հասնում է իր կիզակետին, հրավառվում, չորանում է բնությունը, մարդիկ զանգվածաբար ջրցանություն են կատարում և աստվածներից ջուր խնդրում: Մինչ եկեղեցում երգում էին «Խորհուրդ խորին», Սուրբ, սուրբ», Մարմին տերունականները, դրսում երիտասարդները աղավնի էին թռցնում: Դա ըստ երևույթին, կապված էր Նոյան աղավնու և Անահիտ (ծննդաբերության և պտղաբերության) աստվածուհու տոների հետ: Հանդիսականների հիացական բացականչությունների ներքո աղավնիները ցույց էին տալիս իրենց տերերի աղավնի վարժեցնելու հմտությունն ու սեփական վարպետությունը: Եթե աղավնին երեք անգամ պտտվում էր սիրած աղջկա տան կտուրին, նույն աշնանը հարսնության էին տանում նրան: Առավոտյան ժամերգությունից հետո, ամեն մի ընտանիք մատաղ էր անում: Զոհաբերում էին գառ, ուլ, փոքրիկ հորթ, իսկ չունևորները՝ աքլոր կամ հավ, որը դարձյալ բնությանը սիրաշահելու միտում ուներ:

https://nunemargaryan.wordpress.com/2020/01/27/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D5%A5%D5%BD%D5%A5%D6%80%D5%A8-%D5%A1%D5%BE%D5%A1%D5%B6%D5%A4%D5%B8%D6%82/

ԳԼՈՒԽ 2. ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախադպրոցական տարիքի երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրողը ու ակտիվ փոխանցողը: Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացումը ծեսերի, տոների իրագործման ընթացքում տեղի է ունենում բնական, հաղորդակցական միջավայրում և մթնոլորտում: Ծեսի կազմակերպման ընթացքում երեխան խոսում և շփվում է հասակակիցների, մեծահասակների հետ, և սխալ կլինի մտածել, թե երեխայի խոսքը կարելի է զարգացնել միայն խոսքի զարգացման հատուկ պարապմունքների ժամանակ, կամ երբ հատուկ ուշադրություն ենք դարձնում նրա խոսքին: Նախադպրոցական կրթության մեջ ծեսերի կարևորության առանձնահատկություններից մեկն էլ այն է , որ երեխայի անձի զարգացման բոլոր ոլորտները զուգահեռ զարգանում են ծեսին նախապատրաստվելու և այն իրագործելու գործունեության ընթացքում:

Երեխաները ծեսի կազմակերպման ընթացքում շփվում և հաղորդակցվում են: Նրանք յուրովի նախագծում են իրենց անելիքը, քննարկում ընկերների հետ: Ծեսի կազմակերպման ընթացքում դաստիարակը ծեսի ու գործողությունների մասին անհրաժեշտ տեղեկություն է հաղորդում: Երեխաները պատմում են իրենց իմացածը և դրան ավելացնում նորը: Երեխան իր գործունեության բոլոր տեսակների զուգահեռ խոսում է, պատմում, թե ինչ է անում, կարծիք հայտնում, նկարագրում, հարց տալիս ու պատասխանում հարցերի: Այս ամենը բնականաբար, խոսքի զարգացման հատուկ պարապմունքներից ոչ պակաս նպաստում է երեխայի խոսքային կարողությունների զարգացմանը: Նախ նշենք, երեխան ավելի շատ սովորում է լսածը գործողության վերածելով, քան մենակ լսելով:Այդ իսկ պատճառով ծեսերի և տոների իրագործումը երեխաների մասնակցությամբ շատ արդյունավետ միջոց է այդ ամենին հասնելու համար, քանի որ ծեսերի կազմակերպումը ամբողջությամբ խաղ է և գործողությունների շարան:

Ներկայացնենք, թե ծիսական գործողությունները ինչպես են ազդում երեխայի խոսքի, ինչպես նաև խոսքին նպաստող մյուս ոլորտների՝ սոցիալական, հուզական,

մտավոր զարգացման վրա: Շատ կարևոր է երեխային ներգրավել ծեսի նախապատրաստական աշխատանքներին: Այդ նախապատրաստական աշխատանքները հիմնականում ծիսական պարագաների պատրաստումն է: Այս գործողության ընթացքում երեխաները հնարավորություն են ունենում նկարելու, ներկելու, կտրելու և տարբեր նյութերից ծիսական պարագաներ պատրաստելու: Այս ընթացքում երեխաները խոսում են ծեսի մասին: Նրանք իրենց երևակայությամբ կարող են հորինել ու ավելացնել նոր դրվագներ, պատմել ու ավելացնել (այսինքն խաղալ) այն ինչ իրենց հոգուն ու միջավայրին է հարազատ: Հենց այն ամենը շատ մեծ ազդեցություն է թողնում երեխայի խոսքին նպաստող՝ սոցիալական, հուզական և մտավոր զարգացման վրա:

2.1. Ծիսական խաղերի իրականացում

Ինչպես գիտենք խաղը երեխայի խոսքի զարգացման ամենակարևոր միջոցն է: Ծեսերի ամբողջական իրականացումը ինքնին կարելի է համարել խաղ, սակայն մենք ունենք պարզ ու գեղեցկ ծիսական խաղեր, որոնց իրականացման միջոցով կարելի է ունենալ մեծ արդյունք՝ երեխայի զարգացման հարցում: Ծեսն այն միջավայրն է, որը երեխային տալիս է հնարավորություն խաղալ ազատ կամ ունենալ դերային խաղեր:

Ազատ խաղը երեխային տալիս է ինքնադրսևորվելու հնարավորություն: Ծեսի ընթացքում դերային խաղը օգնում է երեխային յուրացնել ծանոթ ու անծանոթ երևույթները, հասկանալ դրանց դերն ու նշանակությունը, իրենց վրա որոշակի պատասխանատվություն վերցնել, նոր տեղեկություններ ստանալ ու զարգացնել ունեցած հմտությունները: Ծիսական ու մանկական խաղերը ազդում են երեխայի խոսքին նպաստող մյուս ոլորտների՝ սոցիալական, հուզական, մտավոր զարգացման վրա: Ինչպես նշեցինք ծեսի իրագործումը ինքնին խաղ է: Երբ երեխան կատարում է երկրագործի աշխատանք՝ դա ևս խաղ է, որ երեխան խաղում է՝ կրկնօրինակելով հայրիկին, պապիկին, մայրիկին և այլն:Նա փորում է, ջրում, տնկում:Դա արվում է խմբակային, որտեղ երեխան ձեռք է բերում հերթով գործողություն կատարելու, մեկը մյուսին զիջելու կարողություն:

https://tatevsahakyanblog.wordpress.com/2018/06/14/1967/

Ամենակարևորը՝ երեխաները հայտնաբերում են, որ մյուսների հետ խաղալն ու աշխատելը հաճելի է։ Այս ամենը շատ արդյունավետ ազդում է երեխայի սոցիալակն զարգացման վրա։ Ծիսական խաղերը շատ դրական է ազդում նաև երեխայի զգացմունքային զարգացման վրա։ Խաղի ժամանակ նրանց մոր դրսևորվում է վախեր (օրինակ՝ ձուն կռվեցնելու ժամանակ կարող է իր ձուն կոտրվել), հույսեր (որ ամպայման ինքն է հաղթելու), ուրախություն (հաղթելու դեպքում)։ Ծիսական խաղը շատ կարևոր ազդեցություն է գործում երեխայի մտավոր զարգացման վրա։ Ինչպես գիտենք օրինակ կան ձվախաղեր ու ընկուզախաղեր, որոնք զարգացնում են երեխայի իմացական հմտությունները։ Իմացական հմտությունների հարցում մեծ նշանակություն ունի նաև երեխաների հետ կազմակերպած երկրագործի աշխատանքները, ինչի շնորհիվ երեխան ձեռք է բերում գիտելիքներ բնության երևույթների մասին և հրստացնում բառապաշարը նոր բառերով։ Այդ խաղերի միջոցով նրանք փորձում են կապեր գտնել լսած տեղեկությունների ու կատարած գործուղությունների միջև, ստեղծագործել ու ավելացնել նորը։ Նրանք փորձարկում են այդ ամենը և սովորում փորձի ու սխալի միջոցով։ Ծիսական երգն ու երաժշտությունը մեծ ազդեցություն է գործում երեխայի զարգացման հետևյալ ասպեկտների վրա՝ զգացմունքային, սոցիալական, լեզվական։ Յուրաքանչյուր մշակույթ ունի սիրո ու փաղանքշանքի երաժշտական դրսևորման իր ուրույն պարզունակ օրինակները, որոնք երեխաները հեշտորեն կարող են յուրացնել և դրանց միջոցով արտահայտել իրենց զգացմունքները։ Երեխաների զգացմունքների վրա շատ դրական է ազդում այն, երբ նրանք տեղեկանում են, թե ովքեր և երբ են կատարել այդ երգերը։ Նրանք ավելի սիրով ու ջերմությամբ են կատարում, ինչի միջոցով էլ արտահայտում են իրենց հրճվանքն ու ուրախությունը։ Ծիսական երգն ու երաժտությունը զորեղ միջոց է երեխայի սոցիալական զարգացումը խթանելու համար։ Երեխաներին մեծ հաճույք են պատճառում ծիսական այն երգերը, որոնք կազմակերպվում են խմբակային և երկխոսության տեսքով։ Ծիսական երգերը իրենց մեջ պարունակում են արարողակարգեր, որոնց միջոցով երեխաները գովում են մեկը մյուսին, նվիրում ծաղիկներ, քաղցրավենիք, ուտելիք և այլն, ինչն էլ երգի և երաժշտության հետ համատեղ էլ ավելի է նպաստում սոցիալական զարգացմանը։ Ծիսական երաժշտությունը կարող է զարգացնել երեխայի լեզվական

կարողությունները: Մեղեդին հղկում է հիշողությունը ,հետևաբար երեխան կ հիշելով երգի բառերը, զարգացնում է իր բնական խոսքը: Երաժշտությունը զարգացնում է բառապաշարը: Երեխաները կարող է ցանկանալ հորինել իրենց սեփական երգերը՝ իմացած կամ ծանոթ մեղեդիների օգտագործմամբ, այդպիսով պատմելով իրենց պատմություններն ու արտահայտելով իրենց անհատական զգացողությունները: Քանի որ ազգային ծեսերից շատերը առնչվում են բնության հետ (օրինակ՝ Ծաղկազարդ, Համբարձում և այլն) հիմնականում պետք է կազմակերպվեն բացօթյա միջավայրում: Ինչն էլ իր հերթին նպաստում է երեխայի աճի և զարգացման համար: Երեխայի զարգացման բոլոր ոլորտները, այդ թվում՝ խոսքային և մտավորը, նկատելիորեն առաջադիմում են բացօթյա միջավայրի հետ շփվելու ընթացքում: Երեխայի և բնության հետ ստեղծվում է ներդաշնակ կապ:Ինչպես նաև բացօթյա միջավայրը հզոր միջոց է գեղեցիկն ընկալելու:

Ներկայացրած դրույթները գործնականում կիրառելով համոզվում ենք, որ իրոք ծեսը կարևոր նախապայման ու հարմար միջավայր է երեխայի խոսքի զարգացման, աշխարհընկալման ու հաղորդակցման համար: Նախադպրոցական ուսումնական հաստատության սանի համար ազգային ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է, այդպես ավելի տպավորիչ ու հասանելի է, հասկանալի, գործնական: Նախակրթարանում գործունեության հիմնական ձևերը իրականացվում են խաղի միջոցով: Խաղը զարգացնում է երեխայի

- ուշադրությունը
- հիշողությունը
- երևակայությունը
- ստեղծագործելու կարողությունը
- հաղորդակցման կարողությունը
- շարժողականությունը

Նաև համոզվում ենք, որ ծիսական խաղերը ևս շատ դրական ձևով են ազդում երեխայի խոսքին նպաստող ոլորտների՝ սոցիալական, հուզական ու մտավոր զարգացման վրա:

Երբ երեխաները երկագործի աշխատանք էին իրականցնում, շատ պարզ ու հստակ պատկերացում ունեցան, թե ինչպես կարելի է ծառերն ու բույսերը խնամել,

ինչպես ցանել ցորենը՝ հողում և բամբակի վրա (ածիկ) զատկի տոնին օգտագործելու համար: Պատկերացրին մարդու և բնության սերտ կապն ու այս ամենը ծիսական միջավայրում: Ըմբռնեցին ծեսի նշանակության կարևորությունը: Հարստացրին իրենց բառապաշար նոր բառերով:

Երեխաները սիրով են սովորում և երգում ծիսական երգերը: Երգի հետ զուգընթաց նաև խաղում են: Սա երեխաների մոտ ձևավորում է որոշակի երաժշտական ճաշակ՝ նրանց մոտեցնելով հայ մշակույթի արմատներին:

Նրանք հեշտորեն կարողանում են յուրացնել ազգային երգն ու պարը՝ դրանց միջոցով արտահայտելով իրենց զգացմունքները:

Թեմատիկ միջոցառումների կողքին այսօր իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ազգային տոներն ու միջոցառումները՝ Բարեկենդանը, Զատիկը, Տեառնընդառաջը: Դահլիճը ձեւավորվում է ազգային զարդանախշերով, և նոր շունչ է ստանում ազգային տարազը, որով երեխաները զգեստափոխվում և հոգեպես կապվում են իրենց նախնիների հետ: Այս տոները վերածվում են հանդիսության՝ շնորհիվ գեղեցիկ, ուրախ երգերի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով հետազոտության արդյունքում տեսական գրականության արդյունքում եկանք մի շարք եզրահանգումների, ուսումնասիրության և վերլուծության, ծեսերի և ազգային տոների ուսումնասիրման

1. Որ ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունը՝ դա ազգային մշակույթի յուրացումն է, երաժշտական ճաշակի զարգացումն է:

2. Առանձնահատկությունը այն միասնական գործողություններն են, որոնք համախմբում են մարդկանց, նրանց մտքերը, գաղափարները, միասնական գործողությունները:

3. Ազգային տոների և ծեսերի կազմակերպումը ունի մի շարք առանձնահատ-կություններ, որոնք պահանջում են տեխնոլոգիական, երաժշտական, պատմական, լեզվական լրացուցիչ կրթության լուծումներ:

4. Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների զարգացումը բազմակողմանի է, քանի որ ազգային ոգով զարգացմանը զուգընթաց զարգանում է երեխայի խոսքը և լեզուն, զգացմունքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. [Հայկական ծեսերը]Ռիմա Ռստկյան
2. [Ազգային տ ոներ] Ա. Սարգսյան
3. [Հայ ժողովրդական տոները] Հ.Խառատյան
4. [Զատիկ] Ռ.Հարոյան
5. [Տոնացույց] Ն.Մովսիսյան
6. https:// https://greeks.am/azgayin-toner/
7. www.armgeo.am/ancient-armenian-holidays/